ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԼԻԱՆԱ ՄԱԼԽԱՍՅԱՆ

Ամփոփելով իրավունքի սկզբունքի գործառույթի եզրույթի և իրավունքի սկզբունքների գործառույթների դասակարգման հիմնահարցերի վերաբերյալ վերլուծությունը՝ կարելի է հանգել հետևյալին. իրավունքի սկզբունքների գործառույթների համակարգը բարդ համակարգ է, որը բնորոշվում է որպես հասարակական հարաբերությունների և մարդկանց վարքագծի վրա հիմնական ներգործության ուղենիշների ամբողջություն՝ հնարավորություն ընձեռելով հասարակական հարաբերությունների մասնակիցներին լիարժեքորեն բացահայտելու իրավական նորմերի գործուն լինելու մեխանիզմները:

Իրավունքի սկզբունքները, հանդիսանալով հասարակական հարաբերությունների հիմնական և օբյեկտիվ օրինաչափություններ, իրականացնում են տնտեսական, քաղաքական և կրթական համասոցիալական գործառույթներ, ինչպես նաև իրավունքի սկզբունքների հետևյալ հիմնական գործառույթները ՝ կայունացման, նորացման, ինտեգրող (միավորող), արժեքաբանական-գնահատողական, կարգավորող և պաշտպանիչ:

Բանալի բառեր **–** իրավունք, պետություն, իրավունքի սկզբունքներ, իրավունքի գործառույթ:

Գործառույթ (ֆունկցիա) եզրույթը կոչված է բացահայտելու հասարակական կյանքի երևույթների էությունը և բովանդակությունը: Սակայն դրա հետ միաժամանակ գործառույթ եզրույթը բազմանշանակ է և բավականին բարդ: Մետաֆիզիկայում այն կիրառվում է որևէ երևույթի դերի և սոցիալական արժեքի բացահայտման դեպքում:

Իրավագիտության մեջ գործառույթ եզրույթն օգտագործվում է հասարակական կյանքի այնպիսի կարևորագույն երևույթների սոցիալական դերի բնութագրման համար, ինչպիսիք են պետությունը և իրավունքը:

Իրավաբանական գրականության մեջ իրավունքի սկզբունքի գործառույթ եզրույթը մեկնաբանվում և ընկալվում է տարբեր ձևերով: Անդրադառնանք դրանցից մի քանիսին:

Ա.Ա. Մակրեցովան իրավունքի սկզբունքի գործառույթը բնորոշում էր հասարակական հարաբերությունների նկատմամբ, այնպիսի գործոն, որի օգնությամբ հասարակական հարաբերությունները ստանում են զարգացման որոշակի ուղղվածություն:

Վ.Ն. Դմիտրուկի կողմից իրավունքի սկզբունքի գործառույթը մեկնաբանվում էր որպես իրավական հարաբերությունների վրա իրավական ազդե-

ցության գլխավոր ուղղություն:

Վ.Ն. Կարտաշովը նշում էր, որ իրավունքի սկզբունքի գործառույթն անհատի վարքագծի, հասարակական հարաբերությունների վրա ներգործող ուղղություն է:

Իրավունքի էությունը և սոցիալական նպատակը դրսևորվում են նրա գործառույթներում: Դրանք արտացոլում են անհատի և հասարակության վարքագծի վերաբերյալ իրավունքի ազդեցության հիմնական ուղղությունները, ինչպես նաև թույլ են տալիս տալ իրավական սկզբունքների գործածության ընդհանուր նկարագիրը:

Եթե փորձենք ամփոփել իրավունքի սկզբունքի գործառույթ եզրույթի բնորոշումը, ապա կարող ենք ասել, որ իրավունքի սկզբունքի գործառույթը, ունենալով սոցիալական նշանակություն, ազդում է հասարակական հարաբերությունների վրա՝ կանխորոշելով դրանց ուղղվածությունը:

Առաջին հերթին, իրավունքի սկզբունքներն ազդում են հասարակության կյանքի տարբեր ոլորտների՝ տնտեսության, քաղաքականության, հոգևոր հարաբերությունների վրա, և, հետևաբար, իրականացնում են ընդհանուր սոցիալական գործառույթներ՝ տնտեսական, քաղաքական եւ կրթական:

Տնտեսական գործառույթն ապահովում է իրավական սկզբունքների այնպիսի մոտեցումների և դրույթների անարգել իրականացումը, որոնք ուղղված են տնտեսական իրավահարաբերությունների իրավակարգավորմանը: Իրավական սկզբունքների տնտեսական գործառույթի գործուն լինելու հանգամանքը կախված է նրանից, թե տվյալ հասարակությունում ինչպիսի տնտեսական մոդել է գործում:

Քաղաքական գործառույթն ապահովում է մարդու քաղաքական և քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման համար երաշխիքների ստեղծում: Ինչպես նաև պետության, քաղաքական կուսակցությունների, շարժումների, հասարակական միավորումների և այլ կառույցների միջև ապահովում է իրավահարաբերությունների բնականոն ստեղծում և զարգացում:

Իրավական սկզբունքների կրթական գործառույթն ուղղված է անհատի, հասարակության, պաշտոնատար անձանց իրավագիտակցության ձևավորմանը և զարգացմանը, ինչպես նաև գաղափարական և բարոյական արժեքային համակարգի ստեղծմանը:

Այս պարագայում իրավունքի սկզբունքների սոցիալական գործառույթի առաքելությունը վերևում թվարկված գործառույթների հետ միասին սոցիալա-

կան հարաբերությունների անխափան և համաչափ զարգացումն ապահովելն է:

Իրավունքի սկզբունքների գործառույթները ցույց են տալիս սկզբունքների դերը և նշանակությունը հասարակական հարաբերություններում, սոցիալական իրականության մեջ, իրավական համակարգում:

Ե.Վ. Սկուրկոն առանձնացնում էր իրավունքի սկզբունքների հետևյալ գործառույթները՝ ինտեգրատիվ (միավորող), կարգավորիչ, իրավապահական, կոմունիկատիվ, օբյեկտիվ իրավունքի համակարգման և նախադեպային:

Ըստ Ժան-Լուի Բերժելի՝ իրավունքի սկզբունքների գործառույթները բաժանվում են բարոյական և փիլիսոփայական, ֆունդամենտալ և տեխնիկական գործառույթների: Սակայն Բերժելն առավել կարևոր էր համարում ֆունդամենտալ և տեխնիկական գործառույթները: Ֆունդամենտալ գործառույթների շարքում էր դասում կարգավորող և իրավապահական գործառույթները, իսկ տեխնիկական գործառույթը, ըստ Բերժելի իրավական սկզբունքների նորարարական և գաղափարական գործառույթներն էին, որոնք ըստ էության իրավական սկզբունքները համապատասխանեցնում էին ժամանակի հասարակական, իրավական պահանջմունքներին:

Բացի վերևում թվարկված գործառույթներից, պետության և իրավունքի տեսության դասական գրականության մեջ գոյություն ունեն իրավունքի սկզբունքների հետևյալ գործառույթները՝ կայունացման, նորացման, արժեքաբանական-գնահատող, լրացնող, միավորող-ինտեգրող, պահպանող, կարգավորող:

Իրավունքի սկզբունքներից կայունացման գործառույթն ապահովում է իրավական համակարգի բնականոն գործունեությունը: Իրավական համակարգի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով իրավունքի սկզբունքների կայունացման գործառույթն ընդդիմանում է արհեստածին, սուբյեկտիվ, կամայական մարդու կողմից ստեղծված և փոփոխելի իրավունքին: Կայունացման գործառույթն ապահովում է պետական իշխանության հենքը, ինչը շատ կարևոր է հասարակության բնականոն զարգացման և հարատևման համար: Իրավունքի սկզբունքների կայունացման գործառույթը, բացի վերևում թվարկված առաքելությունից, նաև ապահովում է իրավական համակարգի կայունությունը և երաշխավորում իրավական համակարգի կենսագործման ընթացքում անհատի կամայական քմահաճույքների և պատահականությունների ի հայտ գալը:

Իրավունքի սկզբունքների նորացման գործառույթի էությունն այն է, որ ինքնին իրավունքը քարացած երևույթ չէ և, պայմանավորված հասարակական զարգացումներով և պահանջմունքներով, անընդհատ ենթարկվում է փոփոխության՝ միաժամանակ պահպանելով իրավական համակարգի կմախքը: Իրավունքի սկզբունքների նորացման գործառույթն ինքնակատարելագործման կոչ է և ուղենիշ իրավական ցանկացած երևույթի համար: Նորացման գործառույթը կենսագործվում է պոզիտիվ իրավունքի բարեփոխումների կամ արմատական (հեղափոխական) ճանապարհով: Պետության և իրավունքի տեսության առաջընթացը և, իհարկե, իրավական սկզբունքների ձևավորումը և զարգացումն ապացուցում են նորացման գործառույթի գործուն լինելու հանգամանքը:

Իրավունքի սկզբունքների արժեքաբանական-գնահատողական գործառույթը կոչված է ապահովելու իրավունքի սկզբունքի էության արժեքավորման և հասարակության կողմից իրավական սկզբունքների օբյեկտիվ ընկալման առաքելությունը: Քանի որ իրավունքը գերակա է, ապա դրա միջոցով գնահատվում, արժևորվում է օրենքում ամրագրված իրավունքի սկզբունքները, և ապահովվում է իրավունքի սկզբունքների հստակ կիրառումը: Մյուս կողմից, իրավունքի սկզբունքների արժեքաբանական-գնահատողական գործառույթով է պայմանավորված պոզիտիվ իրավունքի զարգացումը, ինչպես նաև այն գաղափարները, նպատակները, որոնց միջոցով ապահովվում է իրավական համակարգի բնականոն զարգացումը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ արժեքաբանական-գնահատողական գործառույթը կոչված է լրացնելու իրավունքի սկզբունքները և իրականացնելու համապատասխանեցում արդի իրավական պահանջմունքներին:

Իրավունքի սկզբունքների ինտեգրող (միավորող) գործառույթը ցանկացած երկրի իրավական համակարգում կատարում է միջազգային և ներպետական իրավական սկզբունքների միաձուլման գործառույթ: Ինտեգրող գործառույթը հնարավորություն է ընձեռում ընկալելու և կառուցելու այնպիսի իրավական կառուցվածքային միավոր, որը կհանդիսանա ոչ թե նորմերի քաոսային և ոչ համակարգված կույտ, այլ կհամարվի լիարժեք, միասնական, սեփական կենտրոնական համակարգով հիմնարար գաղափարների, արժեքների և օբյեկտիվ դրույթների համակարգ: Այս գործառույթը պայմանավորված է իրավահասկացության բնույթով և տեսակով: Սակայն բոլոր արդի բոլոր իրավահասկացություններում առանցքը մարդու իրավունքներն են, որոնք էլ հենց, անկախ իրավահասկացությունից, որպես համաշխարհային և միջազ-

գային իրավական իրողություն, կատարում են միավորող գործառույթ առանձին իրավական համակարգի համար:

Կարգավորող գործառույթն ապահովում է հասարակական զարգացումների առավել հստակ արտացոլումն իրավական սկզբունքներում, ինչպես նաև ստեղծում է երաշխիքներ մարդու և քաղաքացու, իրավաբանական անձանց, իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց հիմնարար և սուբյեկտիվ իրավունքների բնականոն և անարգել իրագործման համար: Այս գործառույթի առանձնահատկությունն այն է, որ դրա միջոցով տեսանելի են դառնում օրենքում ամրագրված իրավունքի սկզբունքի էությունը և բնույթը:

Կարգավորող գործառույթի միջոցով իրավահարաբերության մասնակիցներն իրենց լիազորությունների շրջանակներում գործում են ազատորեն, իրենց սեփական հայեցողությամբ: Իրավունքի սկզբունքի կարգավորող գործառույթի օգնությամբ օրենքը սահմանում է, թե ինչպիսին պետք է լինի անհատի վարքագիծը: Այս գործառույթն իրականացվում է պարտադիր նորմերի միջոցով: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կարգավորող գործառույթի շնորհիվ օրենքով սահմանում է ոչ միայն իրավահարաբերության մասնակիցների կողմից պարտականությունների շրջանակը /հարկերը վճարելը, պայմանագրով նախատեսված պարտավորությունները կատարելը և այլն/, այլև սահմանում է իրավահարաբերության մասնակիցների իրավունքների երաշխիքները:

Իրավունքների սկզբունքների պաշտպանիչ գործառույթը կոչված է ապահովելու իրավունքի սկզբունքների գործունեության իմպերատիվ բնույթը: Այս գործառույթի միջոցով իրավասու մարմինները, պետական, պաշտոնատար անձինք հնարավորություն են ստանում իրականացնելու և կազմակերպելու իրավական համակարգի հենքը կազմող իրավական սկզբունքների պաշտպանության ապահովում: Պահպանող գործառույթը նպաստում է օրենքի՝ որպես անհատական և հասարակական արժեքների գլխավոր և հիմնարար կարգավորիչի, զարգացմանը: Տվյալ գործառույթն իրականացվում է հատուկ պաշտպանական նորմերի կիրառմամբ:

ПРОБЛЕМЫ ФУНКЦИЙ ПРИНЦИПОВ ПРАВА В ПРАВОВОЙ СИСТЕМЕ

ЛИАНА МАЛХАСЯН

Статья посвящена проблемам, касающимся функций принципов права, имеющихся в правовой системе. Подводя итог анализа посвященного термину

функций принципа права и проблемам классификации функций принципов права, можно прийти к следующему выводу: система функций принципов права является сложной системой, которая характеризуется как совокупность главных директив влияния на общественные отношения и поведение людей, давая возможность участникам общественных отношений полностью выявить продуктивные механизмы правовых норм.

Принципы права, являясь главными и объективными закономерностями общественных отношений, осуществляют экономические, политические и образовательные общесоциальные функции, а также следующие главные функции принципов права: стабилизирующую, обновляющую, интегрирующую (объединяющую), ценностную-оценивающую, регулирующую и защитную.

Ключевые слова – право, государство, принципы права, функция права.

THE ISSUES CONCERNING THE FUNCTIONS OF LAW IN THE LEGAL SYSTEM

LIANA MALKHASYAN

This scientific article is concerned with the issues regarding the functions of law in the legal system. Summarizing the analysis dedicated to the designation *the principle of law* and the issues of classifying the functions of the principles of law, we could conclude that the system of law principles is a complex system, characterized as a totality of basic influencing guidelines on public relations and people behavior. This will give the participants an opportunity to fully reveal the mechanisms of the functioning of legal norms.

Legal principles representing the basic and objective norms of public relations implement economic, political and educational full social activities as well as stabilizing, renewing, integrating, value-assessing, regulative and protective responsibilities.

Key words – law, state, legal principles, function of law.